ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

Խ. Դ. ԲԱԴԻԿՅԱՆ

Իրենց իմաստաբերականական բազմազան առանձնահատկությունների, քերականական կարգերի հարստության, կառուցվածքային տիպերի բազմազանության շնորհիվ ինչպես շատ լեզուների, այնպես էլ հայերենի դարձվածաբանական համակարգում ամենամեծ կշիռն ու գործածության ամենալայն ոլորտն ունեն բայական դարձվածային միավորները (այսուհետև՝ ԴՄ)։

Դառնալով դարձվածի բաղադրիչ, բայն իր իմաստային, բառաքերական ական ու գործառական հատկանիշներով է օժտում նաև դարձվածային կապակցությունը, որը ոչ միայն անվանում է գործողությունը, եղելությունը կամ դրությունը, այլև արտահայտում է բայերի հետ կապված ամենաբազմազան վերաիմաստավորված *հարաբերություններ, որոնք այդ իմաստով չէր կարող արտահայտել սովորական շարահյուսական կապակցություններում։ Այսպես՝ իր սովորական իմաստով, սովորական շարահյուսական կապակցություններում գնալ բայը* շարժում, տեղաշարժ *է նշանակում* (գյուղ գնալ, դասի գնալ, մեքենայով գնալ, գիշերով նանապարհ գնալ)։ *Ցանկացած ազատ բառակապակցության մեջ այդ բառը պահում է իր հիմնական իմաստը, բայց դարձվածային կապակցությունում այն հաճախ դադարում է շարժման գաղափար արտահայտելուց և բոլորովին նոր իմաստ է ձեռք բերում՝ կապակցության մյուս բաղադրիչների շնորհիվ։ Օրինակ,* ձեռքից գնալ, ուշքից գնալ, գլուխը գնալ, խելքը գնալ *դարձվածներում շարժման կամ տեղաշարժի գաղափարը գրեթե բացառվում է։*

Հայերենի բայական ԴՄ-ների առատության պատճառներից մեկն էլ այն է, որ շատ անվանական ԴՄ-ներ *պոտենցիալ հնարավորություններ ունեն համալրվելու անորոշ դերբայով և վերածվելու* բայականի. *այսպես օրինակ՝* կանաչ նանապարհ *գոյականական դարձված է, այն հեշտությամբ համալրվում է անորոշ դերբայով և վերածվում է բայականի՝* {[(Կանաչ նանապարհ)+տալ]+մեկին}։

Բայական ԴՄ-ները անպայմանորեն կազմվում են երկու հիմնական մասերից՝ անվանական *և* բայական. *անվանական մասը կարող է բաղկացած լինել մեկ, երկու, երեք և նույնիսկ ավելի բաղադրիչներից, իսկ բայական մասը, որ նման կառույցի գերադաս անդամն է, անպայման* անորոշ դերբայն է (մեջքը պնդացնել, ձվի մեջ մազ փնտրել, թացը չորի հետ վառել) *կամ էլ որևէ* հարադիր բայ (մատով ցույց տալ, բերանի ծամոն դառնալ, ջանը քոր ընկնել)։

Հայտնի է, որ լեզվական որևէ համակարգի կառուցվածքը ներկայացնում է այն ամենաբարձր մակարդակը, որի մեջ միավորները բնորոշվում են իրենց ունեցած փոխհարաբերություններով ու դերով[1]։ *Ահա հենց այդպիսի հարաբերություններով ու դերով էլ բնութագրվում են բայական ԴՄ-ների բաղադրիչները, որոնք թեև իմաստային տեսակետից ձուլվում ու անանջատելի ամբողջություն են կազմում, բայց, այնուամենայնիվ, այդ ամբողջության մեջ յուրաքանչյուր բաղադրիչ մյուսի հետ կապվում է* ձևաբանական *ու* շարահյուսական *այն գործոններով, որոնք առկա են ազատ կապակցություններում. սրանցում նույնպես գործում են* քերականական կարգեր, *որոնք առաջին հա-*

---

[1] *Տե՛ս է դ. Ա ղ ա յ ա ն. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը. Երևան, 1967, էջ 18։*

յացքից անորսալի են թվում, մինչդեռ խորազնին ուսումնասիրության շնորհիվ հնարավոր է հայտնաբերել ու վերականգնել նույնիսկ ամենաաննկատելի քերականական իրողությունները, որոնք թաքնված են դարձվածներում։

Գրեթե ամեն մի դարձված կառուցվածքային տեսակետից բաղկացած է միջուկային անդամից և ծավալիչից (կամ ծավալիչներից)։

Բայական դարձվածի միջուկային անդամը անորոշ դերբայն է, որը կարող է ծավալվել տարբեր խոսքի մասերով, ե ըստ ծավալման սահմանների էլ բայական ԴՄ-ները կարող են լինել երկանդամ և բազմանդամ։

Քննենք այդ կառուցվածքային տիպերը առանձին-առանձին։

ԲԱՅԱԿԱՆ ԵՐԿԱՆԴԱՄ ԿԱՌՈՒՑՔՆԵՐ

Ինչպես ամեն մի դարձվածային միավորի, այնպես էլ բայական ԴՄ-ի ելակետային ձևը երկանդամ կառույցն է. դա ամեն մի դարձվածի ամենաստորին տիպն է. այդ տիպի դարձվածներից շատերը ծավալիչների շնորհիվ կարող են դառնալ եռանդամ, քառանդամ, հնգանդամ և այլն։

Երկանդամ բայական ԴՄ-ների գերադաս անդամը անպայման անորոշ դերբայն է, որն օժտված է տարբեր խոսքի մասերով ծավալվելու հատկանիշներով։ Երկանդամ կառույցները բայական դարձվածների համակարգում թվով ավելի շատ են ու ամենամեծ կիրառությունն ունեն. պատճառը՝ կարճ և հեշտ վերարտադրելի լինելն է։ Բացի դրանից, հայերենում հարադիր բայերի վերաիմաստավորումից առաջացած ԴՄ-ների մեծ մասը նույնպես երկանդամ է։

Հարադիր բայերի և դրանց վերաիմաստավորումից առաջացած բայական ԴՄ-ի սահմանների որոշման հարցը լեզվաբանության դժվար հարցերից մեկն է։ Այդ հարցի մասին խոսել են հայ լեզվաբաններից շատերը[2], սակայն դրա լավագույն ու մանրամասն քննությունը կատարել է պրոֆ. Ա. Մարգարյանը[3]։ Նա գրում է. «Դարձվածային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց հարադիրն ու բայական բաղադրիչը միասին առանձնահատուկ իմաստային նշանակություն են արտահայտում և հանդես գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»[4]։

Հարադրավոր բայերից առաջացած ԴՄ-ների մեծ մասը կազմված է մարմնի մասերի անվանումներից և արտահայտում է ընդհանուր, վերացարկված հասկացություններ։ Այսպես, աչք, ականջ, քիթ, բերան, գլուխ, ձեռք, ոտք, մատ, սիրտ, լեզու, երես բառերը՝ ուղիղ և թեք ձևերով, եզակի և հոգնակի թվերով բայական բաղադրիչների հետ հայոց լեզվում կազմում են հազարավոր դարձվածներ (աչք մտնել, աչք ծակել, աչքն հանել, աչքից զցել, ականջ մտնել, ականջները կախել, քիթը ջարդել, քթերը կախել, գլխին նստել, գլուխ տանել, գլխի ընկնել, ձեռք քաշել, սիրտ տալ, լեզու առնել, երես թեքել, բերանները բանալ, ոտները տնկել և այլն)։

Մեծ թիվ են կազմում նաև այնպիսի հարադրավոր դարձվածները, որոնք կապվում են մարդու հոգեկան աշխարհի, ունակությունների, կարողությունների, վարքագծի և զանազան հատկանիշների հետ. դրանք կազմվում են հոգի, շունչ, խելք, միտք, կյանք, ուժ, ուշք և նման բառերի ու որևէ բայի հա-

---

2 Տե՛ս Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1965, էջ 173։ Գ. Սևակ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 162։ Ա. Մուրվալյան. Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն. Երևան, 1959, էջ 72—128։ Ա. Աբրահամյան. Բայը ժամանակակից հայերենում. Երևան, 1962, էջ 176—208։ Ս. Էլոյան. Ժամանակակից հայոց լեզու. հ. 1, Երևան, 1979, էջ 275։ Է. Աղայան. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1983, էջ 222—223։ Э. Туманян. Артикли в современном армянском языке. Ереван. 1963, с. 120—121. 137—142.

3 Տե՛ս Ալ. Մարգարյան. Հայերենի հարադիր բայերը. Երևան, 1966, էջ 198—242։

4 Նույն տեղում, էջ 225։

բադրությամբ (ոգի տալ, ոգին հանել, ոգով դատել, շունչը փչել, շունչ առնել, խելքից հանել, մտքից գցել, մտքով չանցնել, կյանքը տալ, կյանքը ուտել, կյանք մտնել, աչքից գնալ, ուշքի բերել, ուշքի գալ և այլն)։

Բայական հարադրական ԴՄ-ների երկանդամ կառույցների ավելի մեծ թիվ են կազմում անել, լինել, դնել, բերել, գալ, տալ, գցել, քաշել, կտրել, հանել, ընկնել, կապել, առնել, քաշել, բռնել և նման բայերը տարբեր խոսքամասային բաղադրիչների հետ հարադրվելիս՝

թև երես կյանք քթին հոգի	տալ	քիթ բմբլահան աղդան սիրտ դարդ	անել	երես յեղու սիրտ տարիքն սրտին	առնել

Բացի բայական հարադրություն ԴՄ-ներից հայերենում բավական լայն տարածում ունեն նաև բայական երկանդամ այնպիսի կառույցները, որտեղ անորոշ դերբայը զուգորդվում է տարբեր խոսքի մասերով։

Քննենք այդպիսի կառույցների բոլոր տիպերը.

ԳՈՅԱԿԱՆ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Բայական երկանդամ կառույցներում հարադիր ԴՄ-ներից հետո իրենց տարածվածությամբ ու գործառույթով աչքի են ընկնում գոյական և անորոշ դերբայ բաղադրիչներով կազմված ԴՄ-ները, որտեղ գոյականը կարող է հանդես գալ թե՛ ուղիղ և թե՛ թեք ձևերով, թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերով՝ անորոշ դերբայի համար կատարելով շարահյուսական տարբեր պաշտոններ։

Գոյական (եզակի ուղղական-հայցական)+անորոշ դերբայ.—Նման կառույցներում, եթե գոյականը դրված է բուն ուղղականով, բնականաբար ենթակայի դեր է կատարում՝ աչքը կշտանալ, սիրտը մարել, աչքը պաղել, աչքը վախենալ, քունը փախչել, քարը ճաքել, ականջը կանչել, սիրտը քարանալ, սիրտը ճաքել։

Գոյականը նույն պաշտոնով է հանդես գալիս նաև այնպիսի կառույցներում, որտեղ անորոշ դերբայը գործածվում է վ կրավորական ածանցով, ինչպես օրինակ՝ սիրտը պղտորվել, մեջքը կոտրվել, կոկորդը սեղմվել, դիմակը պատռվել, կծիկը բացվել, կրակ թռչվել, երգը երգվել և այլն։

Երկանդամ բայական ԴՄ-ներում ամենամեծ թիվը կազմում են գոյականի եզակի թվի ուղղական-հայցական բաղադրիչներով կառույցները, որտեղ գոյական ծավալիչ անդամը ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոն է կատարում. օրինակ՝ սիրտը դատարկել, սիրտը հովանել, աչքը խաբել, պատիվը գցել. գլուխը քորել, ոտքը կոխել, ոտքը պաչել, ծոծրակը քորել, օձիքը ազատել, ցանցը գցել։

Երկանդամ բայական ԴՄ-ներում գոյական բաղադրիչները շարահյուսական նույն հարաբերությունների մեջ են նաև, երբ անորոշ դերբայ գերադաս անդամը արտահայտված է լինում պատճառական բայերով՝ գլուխ տրաքացնել, սիրտ մղկտացնել, սիրտը հովացնել, օրը սևացնել, աչքը կշտացնել, աչքը վախեցնել։

Գոյական (հոգնակի ուղղական-հայցական)+անորոշ դերբայ.—անորոշ դերբայ գերադաս անդամի հետ հոգնակի ուղղականով հանդես եկող գոյական բաղադրիչը նույնպես շարահյուսական այն պաշտոններն է կատարում գերադաս անդամի համար, ինչ որ եզակի թվով դրվածը. տարբերությունը միայն թվի մեջ է։

Բուն ուղղականով դրվող գոյական բաղադրիչները հանդես են գալիս չեզոք սեռի բայերի հետ և նրա համար ենթակայի շարահյուսական պաշտոն են

կատարում՝ աչքերը խավարել, աչքերը պաղել, թևերը թուլանալ, այծերը գալ (զնալ), թևերը թափվել (նեցուկից, օգնականից զրկվել), ծնկները թուլանալ, ծնկները ծալվել, ոտները քաշվել (խաղաղվել):

Ավելի մեծ տարածում ունեն ներգործական սեռի բայերի հետ հանդես եկող հոգնակի գոյական բաղադրիչները, որոնք ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոն են կատարում, հետևաբար գրվում են ուղղական-հայցական հոլովով. ահա դրանցից մի քանիսը՝ ականջները սրել, ոտները տնկել, մուրքերը կախել, ատամները հաշվել, թևերը ծալել, թևերը քաշել, թևերը կտրել:

Գոյական (եզակի տրական)+անորոշ դերբայ.—*Նման կառույցները հայերենում այնքան էլ քիչ չեն. սրանցում տրական հոլովով դրվող գոյական ծավալիչը կարող է հանդես գալ որոշյալ և անորոշ առումներով. վերջինս ավելի պակաս տարածում ունի* (ճամփա դնել, խոսքի բռնվել, աչքի անցկացնել, շնորհքի գալ, գրոյի հավասարեցնել):

Որոշյալ առումով օրինակներ. լեզվին տալ, թիկունքին կանգնել, ճամփին կանգնել, բերանին գալ, խելքին փչել, բկին կանգնել, վզին շոքել, վզին նստել, գլխին նստել *և այլն։*

Հոգնակի թվով շատ քիչ օրինակներ են հանդիպում. ահա դրանք. ոտներին մեռնել, շներին աղ տալ, շներին գցել, ծնկներին գարկել *և այլն։*

Գոյական (եզակի բացառական)+անորոշ դերբայ.—*անորոշ դերբայը գոյականի բացառական հոլովի հետ զուգորդվելիս մեծ մասամբ կազմում է այնպիսի բայական դարձվածներ, որոնք հիմնականում հարադիր բայերի արժեք են ունենում, մանավանդ երբ կառույցի գերադաս անդամը արտահայտվում է* ընկնել, գցել, հանել *բայերով։ Այս դեպքում նման բայերը գրեթե զրկվում են իրենց նյութական արժեքից և կապակցության մեջ համարժեք են դառնում վերացական բայերին* (խելքից հանել, աչքից գցել, աչքից ընկնել *և այլն)։*

Իմաստային այդպիսի հատկանիշներով են օժտվում նաև շեղել, փախչել, կտրել, կտրվել, առնել, գրկել, գրկվել *և նման բայերով կազմվող կառույցները* (համփից շեղել, բախտից փախչել, օձից փախչել, բերանից կտրել, ձեռքից ազատվել...):

Շատ սակավաթիվ դարձվածներ են կազմվում գոյականի հոգնակի բացառականով (ամպերից իջնել, աստղերից հայտնվել, քրքերից բերել *և այլն)։*

Գոյական (եզակի գործիական)+անորոշ դերբայ.—*գործիականով կառույցները նույնպես բավականին հեռանում են հոլովական իմաստից և մարդու գործելակերպի տարբեր ձևեր ու եղանակներ են արտահայտում. այսպես՝ դրանց մեծ մասը գործողության սաստկության գաղափար է արտահայտում՝* արյունով ողողել, գլխով երաշխավորել, երազով փնտրել, մատով դիպչել, գլխով հատուցել: *Մյուս մասը պարզապես հարադիր բայերի արժեքով է հանդես գալիս* (խոսքով ընկնել, քնով ընկնել, սրտով լինել, ձեռքով անել, խոսքով լինել, ականջով ընկնել, տակով անել, երեսով տալ):

Հոգնակի գործիականով կառույցներում ավելի է ընդգծվում գործողության սաստկությունը. այս դեպքում նկատելի է նաև գործողության կատարման ձևը, եղանակը (սվիններով դիմավորել, ատամներով պաշտպանվել, աչքերով ուտել, շներով քշել):

Գոյական (ներգոյական)+անորոշ դերբայ.—*Ներգոյականով երկանդամ կառույցները բավականին սահմանափակ ծավալ ունեն, և դրանցից յուրաքանչյուրը ունի իր ուրույն իմաստը, այդ պատճառով էլ հնարավոր չէ դրանց միշև միավորող իմաստային կապ գտնել և որոշ ստորաբաժանում կատարել ու դասակարգել. թերևս կարելի է գրանցում ընդունել վերաիմաստավորված տեղի գաղափարը։ Ահա մեզ հանդիպած գոյական ներգոյական հոլովով և անորոշ դերբայով կազմված բայական ԴՄ-ներից մի քանիսը՝* երկնքում ճախրել, աչքում բարձրանալ, գլխում նստել, կոկորդում մնալ, թիկունքում թաքնվել, ծոցում տաքացնել *և այլն։ Ավելի սակավաթիվ են ներգոյականի հոգնակի թվով ձևավորվող ԴՄ-ները՝* ամպերում սավառնել, հեռուներում թափառել, աչքերում կարդալ:

ԱԾԱԿԱՆ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Բացի գոյականներից հայերենում մի քանի ածականներ նույնպես կարող են զուգորդվել անորոշ դերբայ գերադաս անդամի հետ և կազմել երկանդամ բայական դարձվածներ, որոնք խոսքի մեջ հիմնականում հաբադիր բայի արժեքով են կիրառվում։ Այս դեպքում ածականի խոսքամասային իմաստը հիմնականում չեզոքանում է (սև կապել, սև հագնել, կանաչ կապել, կանաչ հագնել, կարմիր հագնել, ծանր նստել, հեշտ պրծնել, անդանակ մորթել, անկրակ վառել (խորովել) *և այլն)։*

Որոշ ածականներ էլ գոյականաբար գործածվելիս դրվում են այս կամ այն հոլովով և անորոշ դերբայի հետ կազմում զանազան բայական դարձվածներ, որոնց մեծ մասը նույնպես հարադիր բայի արժեք է ունենում (սեր տալ, ծանր նստել, բարձրից նայել *և այլն)։*

ԿԱՊ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Ածականների համեմատությամբ ավելի մեծ թիվ են կազմում կապերով կամ կապական բառերով և անորոշ դերբայով զուգորդվող բայական երկանդամ ԴՄ-ները, որոնք հանդես են գալիս հարադիր բայի արժեքով. ահա դրանցից մի քանիսը. դուրս ընկնել, մեջ ընկնել, առաջ քաշվել, վերևից նայել, տակից գործել, վերև թռչել, վրայով անցնել *(թևթևակի նայել, կարդալ) և այլն։*

Բայական երկանդամ ԴՄ-ների կազմում պետք է քննել նաև գոյականով, կապով կամ կապական բառով և անորոշ դերբայով բաղադրված բայական կառույցները, որոնք թեև բաղադրիչների քանակով եռանդամ են, բայց շարահյուսական մակարդակում կապերն ու կապական բառերը առանձին բաղադրիչներ չեն դիտվում, որովհետև դրանք ինքնուրույն իմաստակիր միավորներ չեն և զուտ քերականական դեր են կատարում, ցույց են տալիս կառույցի բաղադրիչների միջև եղած տարբեր հարաբերություններ[5]։

Նման կառույցները միաձույլ են. այսինքն՝ չունեն դարձվածի հիմք և ծավալիչ, չի կարելի գոյականը անջատել կապ+անորոշ դերբայ երկանդամ կապակցությունից և ոչ էլ կապը անջատել գոյական÷անորոշ դերբայ կապակցությունից։ Բերենք մի քանի օրինակներ. թեի տակ առնել, ականջի ետև գրցել, բռան մեջ հավաքել, սառույցի վրա գրել, դափնիների վրա ննջել *և այլն։ Սրանք երկանդամ բաղադրիչներով կարող են փոխարինվել միայն սահմանափակ դեպքերում, երբ կապը հնարավոր կլինի փոխել գոյականի հոլովական վերջավորությամբ* (սառույցի վրա գրել→սառույցին գրել, հանապարհի վրա կանգնել→նանապարհին կանգնել)։

Ասվեց, որ կապով կառույցները միաձույլ են. դրանք կարող են հիմք դառնալ եռանդամ, քառանդամ և հնգանդամ դարձվածների համար՝ ունենալով իրենց դերանուն կամ այլ խոսքի մաս ծավալիչները (քթից հեռու չտեսնել→իր քթից հեռու չտեսնել, ոտքի տակը փորել→մեկի ոտքի տակը փորել, բկին դեմ անել→դանակը մեկի բկին դեմ անել)։

Բերենք գոյական+կապ+անորոշ դերբայ *ԴՄ-ների այլ օրինակներ՝* բարձի տակին ուտել, ոսկու մեջ թաղվել, մեջքի վրա պառկել, լեզվի տակ շմնալ, թռչունի պես ապրել։

Կապը կարող է հանդես գալ նաև գոյականների հոգնակի թվի հետ՝ փշերի վրա նստել, մատների վրա հաշվել, մատները հետն ուտել, դափնիների վրա ննջել, ամպերի մեջ սավառնել, աստղերի հետ խոսել, ասեղների վրա նստել։

---

5 *Տե՛ս* Ն. Պ ա ռ ն ա ս յ ա ն. *Բառակապակցության բնորոշումը և հիմնական հատկանիշները.—Ժամանակակից հայոց լեզու. հ. 3, Երևան, 1976, էջ 17։*

Բերված կապակցություններից մի քանիսը, անշուշտ, ունեն նաև իրենց իսկական, ոչ դարձվածային իմաստներն ու կիրառությունները։

ԲԱՅԱԿԱՆ ԵՌԱՆԴԱՄ ԿԱՌՈՒՑՔՆԵՐ

Լեզվի մեջ իրենց տարածվածությամբ ու գործածության հաճախականությամբ քիչ չեն նաև բայական եռանդամ դարձվածային միավորները, որոնց գերադաս անդամը նորից անորոշ դերբայն է, որը գրեթե միշտ վերջադաս դիրքում է հանդես գալիս։ Եռանդամ կառույցներում նույնպես մեծ տեղ են գրավում հարադիր բայերը, որոնք զուգորդվելով գոյականի կամ այլ խոսքի մասի հետ՝ վերաիմաստավորում են ամբողջ կառույցը, որը կունենա հետևյալ բանաձևը՝

[գոյական+(հարադիր բայ)]

Նկատելի է, որ երբեմն հարադիր բայը, որպես երկանդամ դարձված, բոլորովին այլ իմաստ է արտահայտում, իսկ երբ զուգորդվում է որևէ գոյականով, այդ գոյական ծավալիչը քանակական կողմի հետ փոխում է նաև ամբողջ կառույցի որակական կողմը՝ բոլորովին նոր իմաստ հաղորդելով նրան։ Օրինակ՝

աչքը		ոտքերը	
գիրկը	բաց անել	օրերը	քարշ տալ
սիրտը		գործերը	

Հայերենում բավական տարածված են նաև այնպիսի եռանդամ բայական ԴՄ-ներ, որոնք կազմված են ոչ թե հարադիր բայերից ու գոյականներից, այլ հարադիր գոյականներից ու անորոշ դերբայ գերադաս անդամից. հարադիրները միանում են շաղկապով կամ միացման գծիկով՝ աղ ու հաց կիսել (ուտել), բեֆն ու հալը հարցնել, հող ու մոխիր դարձնել, ձեռն ու ոտը դողալ, կուշ ու ձիշ անել, ծերը-ծերին հասցնել, փեշը-փեշին կապել, հորով-մորով անել, դաշտով-ունեցով անել...։

Այժմ առանձին-առանձին քննենք հայերենի բայական եռանդամ մյուս ԴՄ-ները և ցույց տանք, թե ինչպիսի կառուցվածքային տիպերով են հանդես գալիս դրանք և թե դարձվածի հիմքի[6] հետ որպես ծավալիչներ ինչ խոսքի մասեր կարող են զուգորդվել։

ԳՈՅԱԿԱՆ+ԳՈՅԱԿԱՆ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Հայերենում ավելի մեծ թիվ են կազմում այնպիսի բայական եռանդամ ԴՄ-ները, որոնց կազմում հանդես են գալիս տարբեր հոլովներով դրված երկու գոյականներ և անորոշ դերբայ։ Այսպիսի դարձվածներից շատերը փաստորեն հիմնականում բայական երկանդամ կառույցներ են՝ որևէ հոլովով դրված գոյական ծավալիչի հարադրումով[7]. դրանց կառուցվածքը կարտահայտվի հետևյալ բանաձևով՝

---

6 Դարձվածի հիմք մենք անվանում ենք այն երկանդամ կառույցները, որոնք կազմված են մեկ միջուկային և մեկ ծավալվող անդամներից (ծամոն դառնալ—բերանի ծամոն դառնալ)։ Իսկ կապի առկայության դեպքում հիմքը կարող է նաև եռարաղադրիչ լինել (բուռն մեջ հավաքել—իր բուռն մեջ հավաքել)։

7 Ինչպես եռանդամ, այնպես էլ քառանդամ, հնգանդամ և ավելի բազմանդամ ԴՄ-ները, միշտ է, հաճախ կազմվում են դարձվածի հիմքի վրա այլ ծավալիչների հարադրումից, և կառուցվածքային տեսակետից դրանք ունենում են բերված բանաձևի տեսքը, բայց իմաստային տեսակետից դրանք իրականում դառնում են միաձույլ ու միատարր, և ինչպես հարադիր կա-

[գոյական+(գոյական+անորոշ դերբայ)]

|բոստանը| |քար գցել|

Ինչպես երևում է բանաձևից, ծավալիչ գոյականը դարձվածի հիմքի համար միշտ նախադաս դիրքում է հանդես գալիս. գերադաս անդամը՝ անորոշ դերբայը, գրեթե միշտ ետադաս է։ Խիստ սահմանափակ են այն բայական ԴՄ-ները, որոնցում անորոշ դերբայը միջադաս դիրքում է հանդես դալիս. այս դեպքում դարձվածի ծավալիչ գոյականն է իր դիրքը փոխում՝ կապված ԴՄ-ի որևէ անդամը շեշտելու և ընդգծելու հետ. օրինակ՝ fur գցել ճանապարհին, ցեխ fսել երեսին, փորձանք բերել գլխին *դարձվածներում դարձվածների հիմքերն են ոչ թե* գցել ճանապարհին, fսել երեսին, բերել գլխին, *այլ՝* fur գցել, ցեխ fսել, փորձանք բերել, *որտեղ* fur, ցեխ, փորձանք *բաղադրիչները շեշտվելու պատճառով են նախադաս դիրքով հանդես եկել, իսկ դրանք շեշտվել են անորոշ դերբայի՝ անմիջապես իրենց հաջորդելու շնորհիվ։*

Բերված ԴՄ-ները կունենան կառուցվածքային հետևյալ բանաձևը՝

[(գոյական+անորոշ դերբայ)+գոյական]

| կատու խփել | | պատերը |

Գոյական (ուղղական-հայցական)+գոյական (ուղղական-հայցական)+անորոշ դերբայ.—*այս տիպի կառույցներում ուղղական-հայցական հոլովով դրվող գոյականները անորոշ գերադաս անդամի նկատմամբ հիմնականում երկու կարգի շարահյուսական կապի մեջ են լինում.*

ա) եթե անորոշ դերբայը ներգործական սեռի է, ուրեմն գոյականներից մեկը հանդես է գալիս ուղիղ խնդրի, *իսկ մյուսը* տեղի պարագայի *շարահյուսական պաշտոններով. ըստ որում՝ մի դեպքում ուղիղ խնդիրն է նախորդում տեղի պարագային* (խոսքը կտուրը գցել, թոգը երկինք հանել), *մյուս դեպքերում՝ տեղի պարագան է նախորդում ուղիղ խնդրին* (բերանը հող գցել, գլուխը fոլոգ դնել, ծոցը fար դնել).

բ) եթե անորոշ դերբայը չեզոք սեռի է, գոյականներից մեկը անպայման ենթակայի շարահյուսական պաշտոն կունենա, իսկ մյուսը՝ տեղի պարագայի (ձայնը երկինք հասնել, խոսքը գետին չընկնել, խոսքը օուրն ընկնել, լեղուն փորն ընկնել):

Նման կառուցվածքի ԴՄ-ներից շատերը կարելի է դիտել նաև եռանդամ հարադրություններ (հոգին բերանը գալ, սիրտը փորն ընկնել, գլխարկը գետնովը տալ, սիրտը կրակ գցել):

Գոյական (սեռական-տրական)+գոյական (ուղղական-հայցական)+անորոշ դերբայ.—*գոյականի սեռական հոլովը իրեն հաջորդող գոյականի համար բնականաբար հատկացուցիչի շարահյուսական պաշտոնով է հանդես գալիս* (սրտի ճանապարհը գտնել, ջաղացի ոտը վերցնել, աչքի որդը կոտրել, fսակի բերանը բանալ):

Որոշ կառույցներում էլ սեռականով բաղադրիչը որոշչային պաշտոնով է հանդես գալիս (արջի ծառայություն մատուցել, շան բախտ ունենալ, հավի խելք ունենալ, ջրի համփսու դարձնել):

ռույցներում, այնպես էլ սրանցում, ամբողջ դարձվածը բոլորովին իմաստափոխվում է, երբ հարադրվում է այլ բաղադրիչների՝ ծավալիչների հետ։ Բազմաբաղադրիչ ԴՄ-ների կառուցվածքային տիպերը վերլուծելիս մենք աշխատել ենք ոչ թե կառույցը քանդելու, դրա բաղադրիչները անջատելու տեսանկյունով, այլ մեր նպատակն է եղել ցույց տալ, թե ամբողջ դարձվածը ինչպիսի կազմություն ունի, ինչ տարրերից է բաղադրված. այդ պատճառով էլ մեր վերլուծությունները հաճախ տեսական նպատակ են հետապնդում։

Վերջանին հաջորդող գոյական բաղադրիչը, նայած բայի խնդրառության, սեռի հատկանիշի, կարող է ուղիղ խնդրի կամ ենթակայի դերում հանդես գալ (բերված բոլոր օրինակներում այն խնդիր է)։ Երկրորդ գոյական բաղադրիչը ենթակայի շարահյուսական պաշտոնով է հանդես գալիս չեզոք և կրավորական բայերի հետ (դառնության բաժակը լցվել, մտքի թելը կտրվել, լախտի անիվը թեքվել)։

Մահմանափակ կառույցներում էլ երկրորդ բաղադրիչ գոյականը տեղի պարագայի դերում կարող է հանդես գալ (ֆամու բերանը գցել, փշի հովը նստել, ականջի բամբակը հանել)։

Գոյական (ուղղական-հայցական)+գոյական (սեռական-տրական)+անորոշ դերբայ.—գոյականի ուղղական-հայցական հոլովը շատ ակտիվ մասնակցություն ունի բայական ԴՄ-ների կառուցվածքում. այն որպես ծավալիչ անդաս հանդես է գալիս բոլոր հոլովներով դրվող դարձվածների հիմքի հետ և նրանց հետ մտնելով իմաստային սերտ կապի մեջ՝ ըստ անորոշ դերբայի սեռի ու խնդրառության հատկանիշի էլ հանդես է գալիս թե՛ ենթակայի (չեզոք և կրավորական բայերի դեպքում) և թե՛ ուղիղ խնդրի (ներգործական և պատճառական բայերի դեպքում) շարահյուսական պաշտոններում։ Օրինակներ ենթակայի համար՝ երկինքը (աշխարհը) գլխին մքնել, դանակը ոսկորին հասնել, ուղտը դռանը չոքել։

Թվով ավելի շատ են այն ԴՄ-ները, որտեղ ուղղական-հայցական բաղադրիչը ուղիղ խնդրի պաշտոն է կատարում (կտուցը քարին քսել, մատը մատին չխփել)։

Այս տիպի կառույցներում անորոշ դերբայի հետ հանդես եկող տրականով դրվող գոյականը հիմնականում անուղղակի խնդրի դեր է կատարում, իսկ որոշ դեպքերում էլ տեղի պարագայի պաշտոնով է հանդես գալիս (ուղտը դռանը չոքել)։

Գոյական (տրական)+գոյական (ուղղական-հայցական)+անորոշ դերբայ.—այս տիպի կառույցները նախորդներից տարբերվում են նրանով, որ անորոշ դերբայ գերադաս անդամը ուղղական-հայցականով դրվող գոյականի հետ դարձվածի հիմք է կազմում, իսկ ծավալիչը դառնում է տրականով դրված գոյականը։ Բաղադրիչների շարահյուսական պաշտոնները նույնն են, ինչ որ նախորդ տիպում։

Նման դարձվածների արժեքով ևս հանդես են գալիս հարադիր բայերը (գլխին կրակ դառնալ, ականջին օղ անել, գլխին ձյուն գալ, սրտին սյուն լինել)։

Սրանց կառուցվածքային բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝

Գլխին		ամպեր կուտակել		Սրտին		յուղ քսել

Գոյական (ուղղական-հայցական)+գոյական (բացառական)+անորոշ դերբայ.—սրանցում ավելի հատկանշական է ծավալիչ գոյական բաղադրիչի ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոնում հանդես գալը, իսկ բացառականով դրվող բաղադրիչը՝ անջատման խնդրի (ճիպոտը քոլից կտրել, կարպետը ջրից ելանել, այբը բեռից ջոկել)։ Բայց ձուկը գլխից բռնել, ուղտը պոչից բարձրացնել, գործը գլխից բռնել և նման ԴՄ-ներում բացարձակապես վերանում են անջատման կամ տեղի իմաստները, դրանցում առկա է միայն գործելակերպի հղանակը։

Նման քերականական հատկանիշներով են օժտված նաև բացառական+ուղղական-հայցական+անորոշ դերբայ բայական ԴՄ-ները, որտեղ ծավալիչ բաղադրիչը բացառականով դրվող գոյականն է (մատից փուշ հանել, քարից հաց քամել, սրտից ջուր խմել, շնից մազ պոկել)։ Կառուցվածքային այս տիպում նկատելի է մի հետաքրքիր երևույթ՝ երբ բացառականը նախադաս է, ուղղական-հայցականով դրվող գոյականը անպայման անորոշ է (երկնքից

կրակ թափվել, աչքից արյուն կաթել), *իսկ երբ վերջադաս է՝ անպայման որոշյալ* (ծուխը քթից հանել, մաղը պատից կախել):

Հանդիպում են նաև բացառական+բացառական+անորոշ դերբայ *տիպի կառույցներ՝* տնից-տեղից գրկվել, աչքից-երեսից ընկնել, քթից-պնչից թափվել *և այլն։*

Գոյական (ուղղական-հայցական)+գոյական (գործիական)+անորոշ դերբայ.—*Թեև այս տիպի կառույցները համեմատաբար սակավ են, բայց շատ նման են նախորդներին. գործիականը կարող է հանդես գալ և՛ նախադաս (այս դեպքում ուղղական-հայցականը նորից անորոշ առումով է գործածվում—* մաղով ջուր կրել, գլխով քամի անցնել, լեզվով ճենճուկ բռնել) *և՛ ետադաս (այս դեպքում նրան նախորդող գոյականը դրվում է որոշյալ առումով—*ուղտը գդալով ջրել, խոսքը շամարով կտրել, լեզուն ծոծրակով հանել): *Վերջին կառույցի դեպքում բացառական հոլովով դրվող գոյականը կարող է հանդես գալ նաև հոգնակի թվով* (գլուխը քամիներով լցնել, փորը օձերով լցնել *և այլն)։*

Գոյական (ուղղական-հայցական)+գոյական (ներգոյական)+անորոշ դերբայ.—*ավելի հետաքրքրական կառուցվածք ունեն ուղղական-հայցական և ներգոյական հոլովներով դրված գոյականներով ու անորոշ դերբայով բաղադրված եռանդամ դարձվածները, որտեղ ծավալիչ բաղադրիչը ներգոյականով դրված գոյականն է, որը դարձվածի հիմքի բաղադրիչները բաժանել է իրարից՝* արյունը երակներում ցամաքել, թուքը բերանում չորանալ, սիրտը փորում խորովվել. *սրանցում ԴՄ-ի հիմքերն են՝* թուքը չորանալ, արյունը ցամաքել *և* սիրտը խորովվել *և ոչ թե՝* երակներում ցամաքել, բերանում չորանալ, փորում խորովվել:

ԱՅԼ ԽՈՍՔԻ ՄԱՍ+ԳՈՅԱԿԱՆ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Բացի գոյականով և անորոշ դերբայով բաղադրված կառույցներից բավականին տարածում ունեն նաև գոյականով, մեկ այլ խոսքի մասով և անորոշ դերբայով ղուգորդված դարձվածները, որտեղ դարձվածի հիմքը կազմում է գոյական+անորոշ դերբայը, *իսկ մյուս խոսքի մասերը հանդես են գալիս որպես ծավալիչներ. դրանցից ամենատարածվածները ածականներով կազմություններն են։*

Ածական+գոյական+անորոշ դերբայ.—*Նման կառույցներում գոյական+անորոշ դերբայի հետ հանդես եկող որակական և հարաբերական ածականները որոշիչի դեր են կատարում տարբեր հոլովներով դրված գոյական բաղադրիչների համար* (թաց տեղ չպառկել, ծանր տեղը չթեթևացնել, հին երգը երգել, ավգյան ախոռները մաքրել, չինական պարիսպ քաշել): *Դրանց կառուցվածքային բանաձևը՝*

| Քաղցր | | աչքով նայել | | | Մանր | | տեղը չթեթևացնել |

Ածականով կառույցներում ածական ծավալիչ անդամը կարող է գոյականի նկատմամբ ետադաս դիրք ունենալ, բայց դրանից բանաձևը չի փոխվում, օրինակ, գլուխը բարձր պահել, հացը ցամաք ուտել, երեսին պարզ նայել *ԴՄ-ների հիմքերն են՝* գլուխը պահել, հացը ուտել, երեսին նայել: *Նման ԴՄ-ներում ածականները հանդես են գալիս ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով։*

Թվական+գոյական+անորոշ դերբայ.—*Թվականով կառույցները շատ սահմանափակ են. սրանցում թեև անորոշ դերբայն է դումարվում* թվական+գոյական *կառույցին, բայց ինքն էլ դառնում է կառույցի դոմինանտ անդամը.* առաջին ջուրթակ նվագել *և* յոթերորդ երկինք բարձրանալ *դարձվածների հիմքերը անվանական կառույցներ են, դրանք ծավալվել են* նվագել *և* բարձրանալ *անորոշ դերբայներով և փոխել են կառուցվածքի ոչ միայն տիպը, այլև իմաս-*

տը։ Սակայն այդպես չեն թվականներով կազմված բոլոր ԴՄ-ները. դրանք մեծ մասամբ խիստ միաձույլ են (ականջները չորս անել, երկու կտոր դառնալ, խոսքերը մեկ անել)։

Դերանուն + գոյական + անորոշ դերբայ.— սրանցից շատերը նախորդների նման նույնպես միաձույլ են, մանավանդ այն ԴՄ-ները, որոնք միջնորդավորված գործողություն են ցույց տալիս (ուրիշի դուդուկով պարել, մեկի խաչով լաղվել, այն աշխարհը ուղարկել, նաև՝ իր երը ճշել և այլն)։

Դերբայ + գոյական + անորոշ դերբայ.— անվանական երկանդամ կառույցներում հաճախ են հանդիպում հարակատար դերբայով ու գոյականով կազմված ԴՄ-ներ, որոնք հնարավորություն ունեն անորոշ դերբայով ծավալվելու և բայական ԴՄ-ների վերածվելու. այսպես՝

[(դերբայ + գոյական) + անորոշ դերբայ], այսինքն՝ | կոտրած դրոշ | | չարժել |

ՁՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Բայական դարձվածների ենթահամակարգում հարադրական կազմությունների կողքին հանդես են գալիս նաև այնպիսի ԴՄ-ներ, որոնց մեկ անդամը կրկնավոր հարադրություն է և որոնք կաղապարվում են միևնույն խոսքի մասին պատկանող միավորների զուգադրումով (կամ կրկնությամբ) և անորոշ դերբայի հարադրումով։

Գոյական + գոյական + անորոշ դերբայ.— սրանցում հիմնականում հանդես են գալիս հարադիր գոյականները, որոնք զուգորդվելով անորոշ դերբայի հետ, բոլորովին վերաիմաստավորվում են (մուր ու լեղի ուտել, թուք ու մուր տալ, ոտք ու ձեռք ընկնել, աղ ու հաց կիսել, յուղ ու մեղր բաժանել, կաթն ու կորեկ լինել, միս ու արյուն դառնալ և այլն)։

Ածական + ածական + անորոշ դերբայ.— այս դեպքում ածականներից մեկը (կամ երկուսն էլ) կարող է հանդես գալ փոխանվանաբար (լավ ու վատ լինել, բացը չորից չջոկել, սևին ճերմակ ասել, տաք ու պաղ անել և այլն)։

Թվական + թվական + անորոշ դերբայ.— երկու թվականներով և անորոշ դերբայով զուգորդված կառույցները ավելի սերտ կապակցություններ են (մեկը երկու չանել, մեկը հազար լինել, մեկը տաս անել)։

Մակբայների և ձայնարկությունների զուգորդությամբ ևս ԴՄ-ներ են կազմվում (մոտ-մոտ անել, հա ու չեն չհասկանալ, ախ ու վախ անել, վաշ-վիշ անել)։

ԳՈՅԱԿԱՆ + ԳՈՅԱԿԱՆ + ԿԱՊ + ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Ինչպես երկանդամ, այնպես էլ եռանդամ կառույցներում քանակային մեծ թիվ են կազմում կապով կամ կապական բառով բաղադրված ԴՄ-ները, որոնք սովորականներից տարբերվում են միայն իրենց բաղադրիչների քանակային կազմով. եթե երկանդամ ԴՄ-ներում կապային կառույցները հանդես են գալիս եռաբաղադրիչ միավորների տեսքով, ապա այս բաժնում հանդես են գալիս քառաբաղադրիչների տեսքով։

Կապային կառույցներում թեև կապը անմիջապես նախորդում է անորոշ դերբային, բայց նրա հետ իմաստակիր միավոր չի դառնում, այլ կապվում է իրեն նախորդող գոյականի հետ, և երեք խոսքի մաս միաձուլվելով (կապ + գոյական + անորոշ դերբայ) դառնում են ամբողջ դարձվածի հիմքը, որի վրա էլ կարող է գումարվել մեկ այլ՝ ծավալիչ անդամ՝

| Գատիվը | | ցեղի հետ հավասարեցնել | | | Մեղքը | | ոտքի տակ դնել |

Նման կառույցներում գոյականներից մեկը կարող է փոխարինվել հարակատար դերբայով՝ կոտրած տաշտակի առաջ կանգնել, ճալած յուղի տեղ բնդունել...

Շատ բայական ԴՄ-ներ նույն իմաստն արտահայտելու համար զուգահեռաբար կազմվում են և՛ կապերով, և՛ առանց դրանց՝ գոյականների հոլովական վերջավորությունների փոխարինմամբ. հմմտ.

Հոգին բուռը հավաքել	հոգին բռան մեջ հավաքել.
կացինը քարին առնել	կացինը քարին դեմ առնել.
գլուխը բարձին դնել	գլուխը բարձի վրա դնել.
ձեռքից հոտ քաշել	ձեռքի միջից հոտ քաշել և այլն։

Բերված զուգահեռ ձևերը քերականական համանիշներ են, ունեն իրենց ոճական ու կիրառական յուրահատկությունները և խոսքային ոլորտները։

Լեզվում կան նաև բազմաթիվ բայական ԴՄ-ներ, որոնք առանց կապերի չեն ձևավորվում (աչքի վրա տեղ ունենալ, մատների վրա խաղացնել, ոտքի տակ գցել)։

ԲԱՅԱԿԱՆ ՔԱՌԱՆԴԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Բայական քառանդամ կառույցները թեև թվով չեն գերազանցում եռանդամներին, բայց բաղադրիչների բազմազանությամբ ու կառուցվածքային առանձնահատկություններով իմաստային ու գործառական ավելի հարուստ հատկանիշներով են օժտված։ Ինչպես նախորդ, այնպես էլ այս տիպի համար գերադաս անդամը նորից մնում է ետադաս անորոշ դերբայը։ Նախորդ տիպի նման սրանցում ևս հարադրավոր կառույցները ամենամեծ թիվն են կազմում, որոնք մեծ մասամբ ձևավորվում են տալ, գալ, անել, դնել, ընկնել, դառնալ, յողնել և նման բայերով ու որևէ խոսքի մաս բաղադրիչով (ձին գլխին քացի տալ, բախտի անիվը շուռ գալ, դանակը ոսկորին դեմ անել, խոփը քարին դեմ առնել, հոգին կորեկի հատ դառնալ)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, նման կառույցներում դարձվածի հիմքը կապակցության վերջում ընկած բայական հարադրությունն է, որն ունի երկու ծավալիչ գոյականներ, որոնք գտնվում են լրացում-լրացյալ հարաբերության մեջ։ Դրանց համար բնորոշ է կառուցվածքային այս բանաձևը՝

[Գոյական+[գոյական+(հարագիր բայ)]] օրինակ՝ [Ձին] [գլխին] [քացի տալ]

Բայական քառանդամ կառույցներում քիչ չեն նաև այնպիսի ԴՄ-ները, որոնք կազմվում են անվանական և բայական հարադիրների զուգորդումից. սրանցում անվանական հարադրությունները մեծ մասամբ հանդես են գալիս բաղհյուսական բարդությունների ձևով՝ շան ու գելի բաժին դառնալ, ձեռն ու ոտը դող ընկնել, մեծ-մեծ գլխից դուրս տալ, հազար-հազար խոստումներ տալ և այլն։

Այս կառույցներում մի հետաքրքիր տեսակ են կազմում կրկնակի հարադրություններով կազմությունները, որոնք կազմվում են մեկական գոյականներից և մեկական բայերից. ըստ որում՝ կառույցի աջ կողմը կամ բխում է ձախից կամ պայմանավորվում է նրանով՝ էշից վախենալ՝ փալանը ծեծել, ջրաղացը կորցնել՝ շախշախը հարցնել, քարը սեղմել՝ ջուր հանել, հոգին տալ՝ գաղտնի ապրել և այլն։

Այսպիսի ԴՄ-ների կառուցվածքային բանաձևը հետևյալն է՝

[(Գոյական+բայ)]+[(գոյական+բայ)] [կամերն առնել] [չոլերն ընկնել]

Տարածված են նաև երեք գոյականով և անորոշ դերբայով բաղադրված ԴՄ-ներ, որտեղ գոյականներից մեկը դերբայի հետ կազմում է դարձվածի հիմքը՝

| Աղոավը | | սիրամարգի | | փետուրներով զարդաբել |

Ահա դրանցից մի երկու օրինակ՝ բախտի գլխին քար գցել, էշի ականջում զուռնա փչել, հոր հարսանիքը միտքը բերել, բզի գլխին բռունցքով խփել և այլն։

Անորոշ դերբայի հետ բաղադրվող երեք գոյականները բնականաբար տարբեր հոլովներով են դրվում և շարահյուսական տարբեր պաշտոններ են կատարում։

Բայական քառանդամ ԴՄ-ներում լայն տարածում ունեն նաև այնպիսի կառույցները, որոնց բաղադրիչներից մեկը ածականն է՝ տկլոր ջանին կատու շալկել, տրից շոր դուրս գալ, հին դարմանը քամուն տալ, սրտի նուրբ լարերին կպչել, կյանքին վարդագույն ակնոցներով նայել, դուռը սև քարով շարել...

Բերված կառույցներում ածականը մի դեպքում նախորդում, մյուս դեպքում՝ հաջորդում է առաջին գոյականին, սակայն սահմանափակ թվով կառույցներում էլ ածականը բաղադրվում է անորոշ դերբայի հետ և նրա հետ կազմում դարձվածի հիմքը, ինչպես՝

| Բախտի անիվը | | ձախ դառնալ | | Լեզվի կապերն | | ազատ արձակել |

Բայական քառանդամ դարձվածների տեսակներից մեկն էլ դերանուններով կառույցներն են, որոնք մեծ մասամբ հանդես են գալիս երկու գոյականների հետ և կարող են լինել ինչպես նախադաս (մեկի չվանով հորը մտնել, ուրիշի բնում ձու դնել, մեկի բանջարանոցը քար գցել), այնպես էլ միջադաս (նիգոտը իր քոլից կտրել, առաջ իր ծառը ջրել, քթից այն կողմ չտեսնել)։

Հարակատար դերբայը և անորոշի հոլովված ձևը նույնպես կարող են դառնալ քառանդամ կառույցի բաղադրիչ և շարադասական տարբեր դիրքեր ունենալ (կոտրած գրոշի արժեք չունենալ, կերած հացը հարամ անել, քիթը սրբելու ժամանակ չունենալ)։ Սրանց հետ կարող է հանդես գալ նաև կապ, որը անորոշ դերբայի հետ հարադրություն է կազմում՝ կոտրած տաշտակի առաջ կանգնել, հալած յուղի տեղ ընդունել, սեվական յուղի մեջ տապակվել և այլն։

Այսպիսի ԴՄ-ներում ամենափոքր թիվը կազմում են թվական պարունակող կառույցները, որտեղ թվականները գրեթե լրիվ զրկվում են թվի գաղափար արտահայտելու իմաստից, և այդ պատճառով էլ ամբողջ կապակցությունը այնքան միաձույլ է դառնում, որ հնարավոր չի լինում այն բաժանել բաղադրիչների. օրինակներ՝ երկու ջրի (քարի, կրակի) արանքում մնալ, գրքի մի երեսը կարդալ, մի ականջը շորս անել, մի շապկի մեջ քնել, երկու տիրոջ ծառա դառնալ... (այս վերջին օրինակում թվականի իմաստը ավելի զգալի է, քան մյուսներում)։

ԲԱՅԱԿԱՆ ՀՆԳԱՆԴԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Նկատելի է, որ ինչքան ավելանում է դարձվածի բաղադրիչների քանակը, այնքան պակասում է նման կառույցների թիվը. այսպես, բայական հնգանդամ կառույցների թիվը հասնում է մոտ 200-ի, վեցանդամ կառույցներինը 50-ից չի անցնում, յոթ բաղադրիչ պարունակող միայն 21 դարձված է մեզ հանդիպել, իսկ ութ բաղադրիչով՝ միայն 9 դարձված. ահա դրանցից երկուսը՝ վանքի հավերը ուտել, մեղքը ուխտավորների վրա գցել, իր աչքի գերանը մոռանալ, ուրիշի աչքի շյուղը նկատել։

Բայական ավելի բազմանդամ կառույցներում հարադրությունների գործածության հաճախականությունը ավելի է մեծանում. այսպես, 200 հնգանդամ բայական կառույցներից 145-ում առկա են հարակիրներ, դրանցից մի քիչ պակաս հաճախականություն ունեն կապերն ու կապական բառերը, որոնցից շատերը կառույցի վերջին բաղադրիչի՝ անորոշ դերբայ դերադաս անդամի հետ հարադրություններ են կազմում։ Այսպիսի ԴՄ-ների մեծ մասը հաստատվում է 2 մասով, այսպես՝

[Ուրիշի ձեռքով] [կրակին շագանակներ հանել]

որտեղ կառույցի ձախ մասը աջի համար, որը հիմքն է, ծավալիչի դեր է կատարել։ Այդպիսի կառույցներ են նաև՝ մկան ծակին հազար թուման տալ, մի կտոր հացի տեր դառնալ, մի ձեռքով երկու ձմերուկ լոնել, գլխի տակ փափուկ բարձ դնել...

Բավական լայն տարածում ունեն նաև այնպիսի հնգանդամ ԴՄ-ները, որոնցում հանդես են գալիս երկու անորոշ դերբայներ՝ ծովը տանել, ծարավ նստ բերել, սալը նոալու փոխարեն սելվորը նոալ, եզը վերցնել, տակը հորթ փնտրել։

Բայական հնգանդամ կառույցներում կան նաև այնպիսի դարձվածներ, որոնք խիստ միաձույլ են և ոչ մի բաղադրիչ լի կարելի անչատել ընդհանուր կառույցից կամ այն փոխարինել այլ բառով. ահա դրանցից մի քանիսը՝ ոտները իր կարպետի չափ մեկնել, պղտոր ջրի մեջ ձուկ որսալ, թացն էլ չորի հետ վառել և այլն։

Հասկանալի է. հնգանդամ կառույցներում հանդես են գալիս տարբեր հոլովներով դրվող գոյականներ, ածականներ, թվականներ, դերանուններ ու դերբայներ։

Բայական հնգանդամ կառույցներից քիչ են տարբերվում ավելի բազմանդամ կառույցները, որոնք հիմնականում նույն հնգանդամ կառույցներն են՝ հավելադրված նոր ծավալիչ անդամներով։

СТРУКТУРНЫЕ ТИПЫ ГЛАГОЛЬНЫХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ

Х. Г. БАДИКЯН

Резюме

Глагольные фразеологические единицы благодаря разнообразию грамматико-семантических особенностей и структурных типов, богатству грамматических категорий наиболее значимы и употребительны во фразеологической системе. В статье подробно исследованы структурные типы двух-, трех-, четырех- и пятичленных глагольных фразеологизмов, их подтипы, а также морфологические, синтаксические и семантические особенности и взаимоотношения компонентов каждой фразеологической структуры.